

تَنْبِيْهُاتٌ

مَحَلَّةُ جَمْعِيَّةِ الْقَاهِرَةِ الْخَيْرِيَّةِ الْأَرْمِينِيَّةِ الْعَامَّةِ

# ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՏՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԼՏԻՐԷԻ Տ.Բ.ԸՄԻՈՒԹԵՆՆԵ

المدير المسئول: ا. صاروخان — شارع عماد الدين بالقاهرة — تليفون ٩١٩٦٣٦ — ص.ب. ٧١٧

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 2

ԱՊՐԻԼ - ՅՈՒՆԻՍ 1968



Ազգային բարեբար ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱԵԱՆ (1833—1911)

## Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

### Ա Ձ Դ

- Տեղեկատունն առ այժմ կը հրատարակուի պարբերաբար:
- Թղթակցութեանց, դրամական նուէրներու, գիրքերու, թերթերու եւ հանդեսներու առարուսմները կատարել խմբագրութեանս հասցեին.

Խմբագրութիւն «ՏԵՂԵԿԱՏՈՒՆ»  
15, Էմատ Էլ Տին փողոց — Գահիրէ  
Հեռ.ախօս 919636 — Նամակատուի 717

---

### Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

- 1 — Հ. Բ. Ը. Միութեան Երջանկայիշատակ Բարերարները
- 2 — Բարեգործականը Ամերիկայի մեջ
- 3 — Զեկոյց Հ. Բ. Ը. Միութեան Այեր Մանուկեան Մշակութային Հիմնադրամ
- 4 — Ապրիլ 24ը Գահիրէի մեջ
- 5 — 1915-ի Եղեռնի զոհերէն
- 6 — Հ. Մ. Ը. Մ.ի 50 ամեակի տօնակատարութիւնը
- 7 — Կեանքը Հայաստանի մեջ
- 8 — Սփիւռքահայ Կեանք
- 9 — Գեղարուեստական կեանք

مَجَلَّةُ مَعْرِفَاتٍ

مجلة جمعية القاهرة الخيرية الأرمينية العامه

# ՏԵՉԵԿԱՏՈՒ

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԼՏՈՒԷՒ Հ.Բ.ԸՄԻՈՒԹԵԼՆ

المدير المسؤول: ا. صاروخان - ١٥ شارع عماد الدين بالقاهرة - تليفون ٩١٩٦٣٦ - ص.ب. ٧١٧

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻՒ 2

ԱՊՐԻԼ - ՅՈՒՆԻՍ 1968

### ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ

#### ԿԱՐԱՊԵՏ ԵՆ ԳՐԻԳՈՐ ՄԵԼԳՈՆԵԱՆՆԵՐ

Բարեյիշատակ Պարոտ Նուպար փաշայի և Կարապետ Մելգոնեանի միջեւ կատարուած բանակցութեանց հետեւանքով, Աղեքսանդրիոյ Խառն Դատարանին առջեւ նախ 1925ին և յետոյ 1926ին, պաշտօնապէս նօտարական աքթով մը Հ. Բ. Ը. Միութեան փոխանցուած է մեծանուն բարերարներուն ամբողջ հարստութիւնը աւելի քան կէս միլիոն անգլիական ոսկի, նըւիրատուութիւն՝ որուն ամենահոյակապ կոթողներէն մին կը հանդիսանայ Կիպրոսի մելգոնեան կրթական հաստատութիւնը:

#### ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱՆԱՆ

Ծնած է Պուլիս 1833 Մայիս 25ին: Իր կրթութիւնը ստացած է Գահիրէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգետան մէջ և յետոյ Համիլթընի անգլիական վարժարանը:

1873ին կ'ըլլայ ռուսական հիւպատոսարանի քանչեկէր, իսկ 1897ին կ'ըստանձ-

նէ փոխ-հիւպատոսութեան պաշտօնը:

Ծանօթ էր իբրեւ իրաւագէտ և աշխատած էր որպէս փաստաբան:

1863ին Գաւառական ժողովի անդամ, յետագային Քաղաքականի ատենապետ: Միութեան հիմնադիրներէն է և մեր մեծանուն նախագահին գործակիցներէն: Մեռած է 1911 Յուլիս 10ին, ազգին կտակելով շուրջ 50,000 եգիպտ. ոսկի:

Հանգուցեալ Գ. Եղիանեանի նուիրատուութեամբ է որ կառուցուած է Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Իր հիմնած կտակազրով եգիպտահայ սաներ երկրորդական և համալսարանական ուսում կ'ստանան:

#### ՍԱՐԳԻՍ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Սարգիս Յովակիմեան ծնած է 1855ին Պուլիս Եէնի Գարու կոչուած աղքատիկ թաղը: Նախնական ուսումը ստացած է իր թաղին ազգային վարժարանին մէջ, յետոյ աւարտած է Պէշեան մայր վարժարանը,

իսկ 1875ին Պուլտոյ ամերիկեան Ռոպըլթ Բոլէճը:

Չանազան գործերէ վերջ, 1800ին Պուլտոյ մէջ ձեռնարկած է երկաթի վաճառականութեան, Անգլիայէն ներածելով երկաթը: 1800ին Նիկոմիդիոյ, 1897ին՝ Սելանիկի և 1904ին Աղեքսանդրիոյ և Գահիրէի մէջ կը հիմնէ իր մասնաձեռնը H. & D. Hovaguimian անուամբ: Ան անմահացուց իր անունը Միութեանս կտակելով Պուլազի հոյակապ շէնքը և սինէման, և որոնց արդիւնքովը բազմաթիւ սաներ կ'ուսանին Գահիրէի և Աղեքսանդրիոյ կրթական հիմնարկներու մէջ:

Մեռած է 5 Նոյեմբեր 1950ին Պուլտոյ մէջ:

**ՍԻՄՈՆ ԳԱՅՍԵՐԼԵԱՆ**

Սիմոն Գայսերլեան և իր կողակիցը՝ Տիկ. Երանուհի եղած են Միութեանս մեծագոյն Բարերարներէն կտակելով շուրջ կես միլիոն անգլ. ոսկիի պատկառելի գումար մը:

Սիմոն Գայսերլեան ծնած է 1865ին Պուլտոյ Սիլեստար թաղին մէջ: Աւարտած է Պուլտոյ Պէրպէրեան վարժարանի շրջանը, ապա ֆրանսական «Իւնիօն» ապահովագրական ընկերութեան մէջ պաշտօնի կոչուելով յիսուն տարի ծառայած է անոր, իբրեւ ընդհանուր անօրէն Մերձաւոր Արեւելքի: Ֆրանսական կառավարութիւնը զինքը պատուած է Պատուոյ Լեգէոնի շքանշանով:

Սիմոն Գայսերլեան կնքեց իր մահականացուն 27 Դեկտեմբեր 1954ին:

**ԹԱԳԻՌՐ ՓԱՇԱ ՅԱԿՈՒԲԵԱՆ**

Թազուր փաշա Յակոբեան ծնած է իզմիր 1827ին: Մեծն Մոհամէտ Ալիի օրով եզլպտոս կուգայ և Մեծն Նուպարի պաշտպանութիւնը կը վայելէ: Կ'ըլլայ կալուածական տեսուչ, և ապա երկաթուղիի վարչութեան անօրէն: Արժանացած է բազմաթիւ շքանշաններու:

1882ին կը ձեռնարկէ Աղեքսանդրիոյ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցիին շինութեան գործը զլուրի կը հանէ 1884ին:

1886ին իրեն շնորհիւ կը նորոգուի Պէյն էլ Սուրէնի Ս. Աստուածածին եկեղեցին:

2000 ոսկի կը ծախսէ Գահիրէի Ս. Մինաս գերեզմանատան շրջապատին և մատուռին նորոգութեանը համար:

Կը մեռնի 1339ին և Խտիւլին արտոնութեամբ կը թաղուի Աղեքսանդրիոյ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ պարտէզին մէջ:

Այրին՝ Տիկ. Երանուհի Յակոբեան 20,000 ոսկի կը կտակէ Միութեանս իր և իր հանգուցեալ ամուսնոյն անուամբ, Երեւանի մէջ մայրանոցի մը հիմնարկութեան համար: Որդին՝ Լեւոն պէյ Յակոբեան 1935ին Միութեանս կը նուիրէ իր սեպհականութիւնը եղող Սէկինի ագարակը 546 ֆետտան հող, որուն եկամուտները կը ծախսուին կրթական ձեռնարկներու:

**ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ**

Կեսարացի, Տիգրան Խան Քէլէկեան դատարարուած է Պուլիս և ուսումը ըստացած է Օրթազիւղի Յակոբ Գուրգէնի հայկական կրթարանին մէջ:

Տերմ հաւատացող մը Հ. Բ. Բ. Միութեան ազգանուէր առաքելութեան, ըրած է անթիւ բարերարութիւններ, որոնց զըլխաւորն էր Տէօրթ Յօլի ոչբանոցը, ուր հարիւրաւոր հարազատներ ապաստան գտան և փրկուեցան թշուառութենէ:

Տիգրան Խան Քէլէկեան մեռաւ 30 Յունուար 1951ին:

**ԱՅՐԱՀԱՄ ՓԱՇԱ ԲԱՐԹՈՂ**

Ծնած է 1850ին և նախնական կրթութիւնը ստացած է Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանին մէջ:

Առատաձեռն և ազգային գործերու նուիրուած պատուական հայ:

Աբրահամ փաշա իր անձնական ծախքով վերանորոգած է Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին: Ձերմ հաւատացող Միութեանս նախախնամական կոչումին: Նուիրած է 1000 ոսկի:

Մեռաւ Աղեքսանդրիոյ մէջ 16 Դեկտեմբեր 1911ին:

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԸ ԱՄԵՐԻԱՅԻ ՄԷՁ

ԹՈՐՈՆԹՕ (Գանատա)

Հ. Բ. Ը. Միութեան Թորոնթոյի վարչութիւնը Ս. Երբորդութիւն եկեղեցւոյ ներքնասրահին մէջ, Հոկտ. 13ին սարքեց երեկոյթ մը ի պատիւ 22 նորագիր անդամներուն: Յոտնկայս ունկնդրուեցան Գանատական և Բարեգործականի քայլերգները: Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիրը: Վարչութեան ատենապետ պր. Գ. Գալուքճեան տեղեկութիւններ տուաւ Միութեան ընդհանուր գործունէութեան շուրջ: Արձանագրուեցան 12 նոր անդամներ եւս:

Հաւաքոյթը փակուեցաւ «Հայ ապրինք» խմբական երգով և Հայր Ժիրայրի պահպանիչով:

ՈՒՌԹՐԹԱՌՆ. Ա. Մ. Ն.

Եսթէր Ակապեանի ջրաներկ նկարներու ցուցահանդէսը տեղի ունեցաւ Միութեան Նիւ Ինկլէնտի կեդրոնին մէջ Հոկտ. 14-18:

Օր. Ե. Ակապեան ամերիկահայ է: Աւարտած է Ուստրի Արուեստի թանգարանի վարժարանը: Երկրորդ անգամ ըլլալով Օր. Ակապեան իր ցուցահանդէսը կը սարքէ Հ. Բ. Ը. Միութեան կեդրոնին մէջ:

— Հ. Բ. Ը. Միութեան Նիւ Ինկլէնտի «Բնար» երգչախումբի ղեկավարութիւնը ստանձնած է Համբարձում Պէրպէրեան, որ արդէն գործի սկսած է:

ԱՍՄՈՒՆՔԻ ԵՐԵԿՈՅԹ

Արտասանութեան երեկոյթ մը տեղի ունեցաւ Հոկտ. 27ին: Յայտագրին մաս կազմեցին երեք հայ սկանաւոր բանաստեղծներու գործերէն քերթուածներ: Այսպէս, Աւետիս Մանուկեան (Ուոթթաուէն)

խոր ըմբռնումով կարգաց Դանիէլ Վարուժանի «Լոյս»ը և Պարոյր Սեւակի «Մայրենի լեզու»ն:

Տիկ. Մերի Արպահան (Ուստրէն) արտասանեց Յովհաննէս Թումանեանի «Աղթամար»ը, իսկ Պելմոնթէն Տիկ. Նարգուհի Կէչիճեան յաջող մեկնաբանութեամբ կարգաց Յովհաննէս Թումանեանի «Կաթիլ մը մեղր»ը, իսկ Փրովիտէնսի Ս. Սահակ և Ս. Մեսրոպ եկեղեցւոյ Հովիւր՝ Տէր Հայկ Տօնիկեան կարգաց Յ. Թումանեանի «Կանչ»ը, որուն մեղմօրէն կ'ընկերանար Տէր Ողորմեան:

Ձեռնարկին ներկայ էին մեծ թիւով հայրենակիցներ:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Պատշէնի Նորթ Իսթըռն համալսարանի իմաստասիրութեան և հոգեբանութեան դասախօս Տոքթ. Եղիշէ Չրաքեան խօսեցաւ մէկ ժամու չափ Ա. Իսահակեանի գրական վաստակի մասին: Կարգաց անոր քերթուածներէն և տուաւ անոնց անգլերէն թարգմանութիւնը:

ԱՅՎԱԶՈՎԱՔԻԻ ԾՈՎԱՆԿԱՐՆԵՐՈՒՆ  
ՅՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆԸ.

Աշխարհահռչակ ծովանկարիչ Յովհ. Այվազովսքիի գործերուն և անոնց մէկ մասին վերարտադրութեան անդրանիկ ցուցահանդէսը տեղի ունեցաւ անգուգական արուեստագէտին ծննդեան 150-ամեակին առիթով, Միութեան կեդրոնին մէջ:

Ցուցահանդէսը բացուեցաւ դասախօսութեամբ մը:

Նկարիչ Լեոն Մնացականեան խօսեցաւ «Այվազովսքի և իր ծովանկարները» նիւթին շուրջ:

Ցուցահանդէսը տեւեց Նոյ. 19-25:



## Զ Ե Կ Ո Յ Ց Ը Լ Բ Ը Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

## Ա Լ Ե Ք Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Ա Յ Ի Ն Հ Ի Մ Ն Ա Դ Ի Մ Մ

Ամենախոր հանոյրով եւ շնորհապարտ զգացումներով կը ծանուցանենք հաստատունք Շ. Բ. Ը. Միութեան ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴԻՄՄի, մեկ միլիոն (1.000.000) տոյարի սկզբնական պատկասեյի նուիրատուութեամբ մը:

Հիմնադրամին գերագոյն նպատակն է զօրեղապէս սատարել սփիւռքի մեջ հայ լեզուի, հայ գրականութեան, հայ ոգիի եւ ազգային ժառանգութեանց պահպանումին, զարգացման եւ տեսականացման:

Այս առաջադրութիւնները պիտի իրագործուին Հիմնադրամին Եկամտով, որ պիտի յատկացուի հետեւեալ կենսական ձեռնարկներուն.—

1. Պիտի հրատարակուին գրական, գեղարուեստական, բանասիրական եւ այլն գիրքեր եւ մենագրութիւններ, ինչպէս նաեւ աշակցութիւն պիտի ընծայուի այս կարգի հրատարակչական ուրիշ նախաձեռնութիւններու:

2. Պիտի քաջալերուին նման անգլիերէն հեղինակութիւններու հրատարակութիւնը եւ մանաւանդ հին եւ նոր հայ գրականութենէն արժեքաւոր գործերու անգլիերէն քարգմանութեամբ լոյս ընծայումը:

3. Լուրջ աշակցութիւն պիտի ընծայուի երիտասարդական այն կազմակերպութեանց, որոնք գերազանցօրէն նուիրուած են ազգային աւանգութեանց պահպանումին եւ մշակոյթին զարգացման:

4. Կարեկից ուշադրութեան առարկայ պիտի ըլլան եւ նիւթական օժանդակութիւն պիտի ստանան այն հայ մտաւորականները որոնք տարիքի կամ առողջական պատճառներու բերումով ապրուստի դժուարութեանց մատնուած են:

5. Մասնաւոր հոգածութիւն ցոյց պիտի տրուի հանգեպ այն հայ ուսուցիչներուն՝ որոնք իրենց կոչումին բարձր գիտակցութեամբ եւ ի գին բազմատեսակ զոհողութեանց՝ իրենց ամբողջ կեանքը նուիրած են հայ մանուկներու դաստիարակութեան գործին:

6. Պիտի հաստատուին մրցանքներ քաջալերելու համար հայ գրողներ, արուեստագետներ, երաժիշտներ, պատմաբաններ եւ բանասերներ, որոնց ինքնատիպ ըստեղծագործութիւններն ու հմտալից աշխատասիրութիւնները պիտի քննուին մասնաւոր մարմիններու կողմէ եւ արժանաւորները պիտի վարձատրուին համապատասխան մրցանակներով:

Վերեւի առաջադրութիւնները ընդհանուր գիծերն են միայն ծրագրուած այս անճախընթաց ձեռնարկին, որուն զանազան մասերուն իրագործումին ու վերահսկողութեան համար Շ. Բ. Ը Միութիւնը յառջիկային պիտի նշանակէ ձեռնհաս անհատներէ կազմուած առանձին յանձնախումբեր:

Անգամ մը եւս Շ. Բ. Ը Միութեան երախտագիտութիւնը կը յայտնենք մեր արժանաւոր Նախագահին՝ Տիար Ա. Մանուկեանի, իր այս վեհօգի նուիրաբերումին համար, որ երկար տարիներու իր երազին իրականացումը կը հանդիսանայ եւ որ մեծ նպաստ մը պիտի բերէ հայապահպանումի այնքան կենսական գործին:

ԴԻՒԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

## ԱՊՐԻԼ 24-Ը ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Զորեքշարթի Ապրիլ 24ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ հանդիսաւորապէս նշուեցաւ Ծնրդ տարելիցը Ապրիլեան Եղեռնին: Պատարագեց Տ. Ներսէս վրդ. Բապուճեան և հոգեշունջ քարոզով մը մըլխիթարեց սգալիւր հայութիւնը: Ս. Պատարագէն վերջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն մեր նահատակներու հոգիներուն խաղաղութեան համար: Երգեցողութիւնները «Շնորհալի» երգչախումբին կողմէ կատարուեցան, առաջնորդութեամբ Մօ. Ե. Յակոբեանի:

Ուրբաթ երեկոյ, 26 Ապրիլ, Հելլոպոլսոյ Ս. Թերեզ եկեղեցւոյ մէջ պատարագեց Արհիապատիւ Ռափայէլ եպիսկ. Պայեան, վիճակաւոր մեր հայ կաթողիկէ հարգատներուն, և քարոզեց: Յաւարտ Ս. պատարագի տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն: Երգեցողութիւնները կատարուեցան «Կիլիկիա» երգչախումբին կողմէ առաջնորդութեամբ Հ. Յովհաննէս վրդ.ի:

### ՍՐԱՀՆԵՐԷՆ ՆԵՐՍ

Թէքէեան սրահի մէջ կազմակերպուած հաւաքոյթը բացուեցաւ անուանի արուեստագէտ Աշոտ Զօրեանի բեմադրած կենդանի պատկերով, զոր կը ներկայացնէր Ծիծեռնակաբերդը: Վարագոյրին ետեւէն Տիկ. Մ. Յակոբեանի յտակ, առոյգ արտասանութիւնը կը լսէր «Ոսկի կամուրջ»ին (Վահէ Վահեան):

Օրուան բանախօսն էր պր. Վ. Վանեան. Պէյրութէն: Գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը: Հաւաքոյթը փակուեցաւ Տ. Սահակ Հօր Պահպանիչով:

«Յուսաբեր» ակումբին մէջ, Հելլոպոլիս, բանախօսեց պ. Սաչիկ Յակոբեան: Գործադրուեցաւ գեղ. պատշաճ յայտագիր: Հաւաքոյթի վերջաւորութեան տրուեցաւ հոգեճաշ, որուն օրհնութիւնը կատարեց Տ. Ներսէս վրդ. Բապուճեան, որ երեկոյթի վերջաւորութեան խօսք առնելով կոչ քրաւ միասնական և եղբայրական գործակցութեան և պահպանիչով փակեց յուշատօնը:

### ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ՄԷՋ

Ուրբաթ երեկոյ, 26 Ապրիլ, Եղեռնի մասին կազմակերպուած բանախօսութիւնը տեղի ունեցաւ: Պր. Արմէն Տատուր խօսեցաւ աւելի քան կէս ժամ մը, ոգեկոչելով մեր նահատակներուն անթառամ յիշատակը:

Հաւաքոյթը փակեց պր. Ս. Շալճեան, որ ցաւ յայտնեց որ Սրահները փոխանակ միասնական կազմակերպութեամբ սգալու մեր նահատակներուն յիշատակը, բաժանբաժան կը նշեն զայն, և յիշեց հայ բանաստեղծին պատգամը.— Հայ ժողովուրդ, քո փրկութիւնը քո հաւաքական ուժին մէջն է...:

### ԱՊՐԻԼ 24 ԱՂԵԳՍԱՆԴՐԻՈՅ ՄԷՋ

Կիրակի, 23 Ապրիլ, խուռն բազմութեան մը ներկայութեան նշուեցաւ Եղեռնի Ծնրդ տարելիցը Աղեքսանդրիոյ Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցիին մէջ, ուր Ս. պատարագը մատոյց Առաջնորդական փոխնորդ Գերաշնորհ Զաւէն Սրբազան: Ս. պատարագէն վերջ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն մեր բիւրաւոր նահատակներու հոգիներուն ի հանգիստ:

«Լուսաւորիչ» երգչախումբը, Արժ. Տ. Յուսիկ Հօր ղեկավարութեամբ երգեցողութեանց մասնակցեցաւ: Պատարագէն վերջ հասարակութիւնը «Կամք»ի և Հ. Մ. Ը. Մ.ի արիններուն և արենոյններու առաջնորդութեամբ տեղ գրաւեց նահատակներու Յուշարձանին առջեւ, որ դալար ծաղիկներով և ծաղիկապսակներով պճնուած էր: Տէր Յուսիկ Հօր «Նահատակք բարի» շարականին երգեցողութենէն վերջ, Սրբազան Հայրը Օրուան իմաստը բացատրող իմաստալից քարոզ մը խօսեցաւ, որմէ վերջ գործադրուեցաւ գեղ. յայտագիրը: Ծաղիկապսակներ զրկած էին Աղեքսանդրիոյ Աղգ. Իշխանութիւնը, Աւետարանական հարազատները, Աղեքսանդրիոյ Հ. Բ. Ը. Միութիւնը, «Յուսաբեր» Մշակութայինը, Նիրը Իսթ Հայկական ակումբը, Հայ կար-

# 1915Ի ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԷՆ

ԻՆՉՊԵՊՆ ԵՄ. ՀԱՍՏԱԿՈՒԵՅԱԼԻ ՌՈՒԿԷՆ ՍԵՆԱԿ

Ռուբէն Սեւակ, բուն անունով Ռուբէն Զիլինկիրեան, ծնած է 1885 Փետրուար 15ին Մարմարա ծովուն երոպական եղերքի գիւղաքաղաքներէն Սիլվիբրի մէջ (Պոլսոյ մօտ)։ Հայրը՝ Յովհաննէս, արհեստով նախ երկաթագործ, ապա երկաթեղէնի առեւտրական, նիւթական բարեկեցիկ վիճակ մը ունէր, որով կրցաւ իր զաւակներուն խնամեալ ուսում մը ջամբել տալ։

Ռուբէն իր ծննդավայրին Ասքանագեան տարրական նախակրթարանը աւարտելէ յետոյ, յաճախած է Պարտիզակի ա-

միր խաչը, «Յառաջգիւմասէր»ը, «Հայ Ազգային հիմնադրամ»ը, «Տիբբան Երկաթ»ը, «Կամք»ը, Հ. Մ. Լ. Մ. ք, Պոզոսեան Ազգային վարժարանը, Ռուս եկեղեցին, ինչպէս նաեւ Զոհրապեան, Գազաղեան և Լ. Գաղթացեան ընտանիքները։

Հետզհետէ խօսք առին Գերյարգելի Հ. Պետրոս վրդ. Քէնտիրճեան, պր. Վահրամ Խունկանեան, պր. Ժիրայր ձէպէլեան, պր. Մուրատ Քէօշկէրեան և պր. Ա. Զոհրապեան։

## ՀԻՔԵՃԱՇԸ

Նիրը Իսթ-Հայկական ակումբին կողմէ նուիրուած հոգեճաշք պատրաստուած էր Հայ կարմիր խաչի նուիրեալ անդամուհիներու կողմէ, որոնք աւելի քան 700 սեղանակիւններու սպասարկեցին։ Սեղանը բացուեցաւ Սրբազան Հօր աղօթքով։ Մեներգեցին Տիկ. Վ. Յարէթեան և Օր. Ա. Պաղչէճեան։ Կարդացուեցան պպ. Պէն Օհաննանի և Յովակիմ Սիրքէճեանի հեռագիրները։ Հոգեճաշի աւարտին Տերունական աղօթքը երգուեցաւ յոտնկայս և հանգիստը թիւնը վերջ գտաւ։ Ստուար թիւով հայրենակիցներ, Գահրբէէն, Նիրը Իսթի կազմակերպութեամբ սուգի արշաւին մասնակցեցան և նոյն օրը դիշերուան ժամը 10, 30 ին վերադարձան։

մերիկեան վարժարանը, անկէ 1901ին կ'անցնի Պոլսոյ Պէրպէրեան վարժարանը զոր կ'աւարտէ 1905ին։ Ռուբէն, ուսուցչապետ Ռ. Պէրպէրեանի թելադրութեամբ կը մեկնի Լոզան բժշկական ասպարէզին նուիրուելու համար։

1911ին Ռուբէն կ'աւարտէ համալսարանի ընթացքը և նոյն քաղաքին հիւանդանոցներուն և դարմանատուններուն մէջ կը ծառայէ որպէս օգնական բժիշկ։ Կ'անցնի Գերմանիա, ուր կը ծանօթանայ յարգուած ընտանիքի մը աղջկան հետ։ Թէեւ աղջկան ծնողքը կը հակառակի իրենց ամուսնութեան, բայց սէրը կը յաղթէ և Ռուբէն կ'ամուսնանայ և կնոջը հետ կը հաստատուի Լոզան ուր բարօր կեանք մը կ'ապրի Ռուբէն։ Փոքր հասակէն նուիրուած էր հայ գրականութեան և սկսած էր Ռուբէն Մ. Կակ ծածկահունով ստորագրել, խի յետագային զանազան յօդուածներ—մանաւանդ բժշկական—հրատարակել Պոլսոյ թերթիւն մէջ։

1914ին սկիզբները Ռուբէն Սեւակ իր կնոջը և զաւակին հետ Պոլիս կը ժամանէ, կինը հաղիւ թրքական մայրաքաղաքին մէջ ոտք կոխած, կը զանայ ամուսինին ու կըսէ.—

Ռուբէն, դառնանք այս գնացքով, ես շատ չի հաւնեցայ այս երկիրն. սոսկում եկաւ վրաս, չե՞ս տեսներ ո՛չ մէկուն գէմքը կը ժպտի . .

Եւ սակայն մնացին և հաստատուեցան Բերա, Բանկալթի Մավրօբուլօ արարթրմանին մէկ յարկարամին մէջ։

Շատ շանցած վրայ կը հասնի աշխարհաւեր պատերազմը և քիչ յետոյ ալ թրքական զօրաշարժը։ Ռուբէն Սեւակ իբրեւ բժիշկ իր զինուորական պարտականութիւնը կատարելու կոչուեցաւ Մաքրի գիւղի մէջ (Պոլսոյ մէկ արուարձանը) ուսկից Ապրիլ 11ի շարաշուք օրերէն քիչ յետոյ ձերբակալուելով աքսորուեցաւ Չանդրըր, մասնակցելու համար գէպի Գողգոթա այն վերելքին, որուն բռնագատուած էր ամբողջ թրքահայութիւնը։

Աքսորն ու նահապետակութիւնը

1915ի Յուլիսի սկիզբները ուսմազանի ծովապահուցութիւնը սկսած էր և ծայր տը-



ւած եղևոնի ապերասանութիւնը: Չարդեշու չարաչուք զբոյցները սկսած էին հասնիլ: Չերբակալուած մտաւորականները (ա. կարաւան) մեկնած էին արդէն: Սանդըրը մընացողներուն թիւը հազիւ 70 հոգի էր: Տարագիրներուն մէջ զբոյց տարածուած էր թէ կրօնափոխութեան յօժար եղողները ազատ պիտի արձակուին: Սեւակ այդ օրերուն աշխատեցաւ սրտապնդելու տկար հոգիները և զատ-զատ երգում ընել տըւաւ ամէն անոնց, որոնց հոգեկան տկալութեանը մասին կատկած ունէր և բոլորն ալ ուխտեցին հաւատարիմ մնալ իրենց լոյս հաւատքին:

Չանդըրըի մեր տարագիրներու մէջ ութը բժիշկ կար, իսկ քաղաքին մէջ ո՛չ մէկ հատ: Հայ բժիշկները իրենց արհեստը ի դորձ գրին տեղւոյն բնակչութեան բարւոյն ի նպաստ: Այդ բժիշկները հետըզհետէ Պոլլս վերագարձան, որոնցմէ մէկն էր նաեւ Տոքթ. Տինանեան: Այս վերջինը Չէթէճի Արապաճը Իսմայիլ անուն գոեհիկին ազջկանը վրայ վերաբուժական գործողութիւն մը կատարած էր, և իր Պոլլս վերագարձին բերմամբ ազջրկան դարմանումը վստահած Տոքթ. Ռուբէն Սեւակի, որ ամէն օր կանտեաւորապէս կը շարունակէր իր բժշկական այցելութիւնները:

Օր մը, հետեւեալ դէպքը պատահեցաւ. Արապաճը Իսմայիլը (դարմանող թրքուհին հայրը) Սեւակը տուն կանչեց և երևու ժամու չափ զինքը զբաղցուց: Ապիրատը նկարագրած էր թէ ի՛նչ մուշկըով կը կատարուին հայկական ջարդերը և թէ ամէն օր ջարդի և կոտորածի նմանօրինակ հրամաններու կ'ապասուէր Չանդըրըի հայերուն համար, և իր Սեւակի հանդէպ ունեցած խանդաղատանքի զգացումները պարզելով հրաւիրած զինքը թրքանալու քանի դեռ ուշ չէր: Իսմայիլ տանը բոլոր անկիւնները, մինչեւ խոհրդաւոր նւուղները պտտցուցած էր, և պառաւ մօքը համբուրել տուած Տոքթորին ճակատը, վերջապէս թոյլ տուած որ Սեւակ մեկնի, պայմանաւ որ մինչեւ 24 ժամ, զինուորագրութեան ճիւղի նախագահին զիմելով իր թրքանալու մասին ու

րոշումը յայտնէ: Հակառակ անոր որ Սեւակ շատ ինդրած էր որ իրեն կրօնափոխութեան պարտադրանք չըլլայ, բայց անօգուտ: Սեւակի մեկնած պահուն հեթանոսը նորէն շէշտած էր թէ սպասուած հրամանը կրնար նոյնիսկ 24 ժամէն առաջ հասնիլ, հետեւաբար պէտք էր աճառարնի պաշտօնակոն զիմումը ընելու համար:

Այս հանդիպումէն 3-4 օր առաջ, էնկիւրիի հայերէն աւելի քան երկու հազար այրեր կոտորուած էին...

Հակառակ Իսմայիլի սպառնալիքին և նորանոր ջարդերու տխրասալուտ լուրերուն Սեւակ իրմէ սպասուած կրօնափոխութեան զիմումը եբքէք չկատարեց:

Սանդըրըի կառավարիչն էր Առաֆ պէյ (Տէօրթ Եօլլի նախկին կառավարիչը որ հինգ տարի պաշտօնագրով մնաց իր հայապաշտպան քաղաքականութեանը համար): Չանդըրըի մէջ ալ, յիշեալ Առաֆ պէյը կը պաշտպանէր հայերը և իր բարեսրտութեան զոհը եղաւ, վասնչի իթթիհատի պատասխանատու քարտուղարին ջանքերով այլուր փոխադրուեցաւ և հայ տարագիրներու վիճակը ծանրացաւ:

Պատասխանատու քարտուղարը կառավարիչին մեկնումէն յետոյ որոշում կայացնել տուաւ որ Չանդըրը մնացողներէն հինգ հոգի եւս (Վարուժան, Սեւակ, Քէլէկեան և ուրիշ երկու հոգի) Այաշ արտորուին: Չանազան զիմումներու հետեւանքով որոշումին գործադրութիւնը ձրգձրգուեցաւ, բայց վերջապէս 13-26 Օգոստոս 1915ին հինգշաբթի առաւօտ մը Սեւակ և իր ընկերները ճամբայ ելան մութն ու լուսուն:

Մեկնումի գիշերը Սեւակ երազին մէջ տեսած էր կիրն՝ նիհարցած և տգեղցած և զաւակը անօրինակ կերպով մեծցած և գեղեցկացած:

Վերջապէս երկու կառքերու մէջ տեղաւորուած հինգ հայերը շարժուեցան դէպի Այաշ ուր արդէն հայ մտաւորականները ոչ եւս էին...

Նոյն օրը երեկոյեան ժամը 12ին մեկնողներուն սպաննութեան լուրը Չանդըրը հասաւ: Հեռախօսչն մօտ գտնուող իթթիհատի պատասխանատու քարտուղարը Օ-

զուլ և ոստիկան-զինւորներու հրամանատարը՝ Նուրէտտին «քահ քահ»ներով ընդունած էին նահատակներուն մահագոյժը:

Այժմ թողունք որ թուրք կառապանը՝ Հասան ինք խօսի.—

«Հետեւեալ օրը, արեւածագէն առաջ ուրիշ անձ մը եկաւ ձին առնելու: Այս մարդը ինծի աջարարեց որ պարտաւոր էի կառքովս միասին երթալ գիւղէն քառորդ ժամ հեռու տեղ մը և ինքզինքս զնել ոստիկանութեան տրամադրութեան տակ: Այդ միեւնոյն տեղը ուրիշ կառք մը կեցած էր: Հոն կը գտնուէին ոստիկանական պաշտօնեայ մը՝ ոստիկան-զինւորի մը ընկերակցութեամբ, ինչպէս նաեւ Պուսէն Չանղըրը աքսորուած հինգ էֆէնտիները: Անոնցմէ մէկը երիտասարդ մըն էր սեւ մորուքով և վառվռուն աչքերով: Ամենքն ալ քաղաքի պէյերուն պէս հագւած էին: Ձեռքերնին կապուած էր: Մըտահոգ և ընկճուած երեւոյթ մը ունէին: Ոստիկանական պաշտօնեան զանոնք առաջնորդեց իմ կառքս և ինքն ալ ոստիկան-զինւորին հետ միասին մտաւ միւսին մէջ: Մեզի հրաման տրուեցաւ ճամբայ ելլել Թիւնէյ գիւղի ուղղութեամբ, որ Չանղըրըն վեց ժամ հեռու է: Ժամ մը յառաջացած էինք, երբ ճամբուն դարձած մէկ կէտին վրայ տեսնուեցաւ երէկուան ձիւտորը, որ մեր ճամբան խաչաձեւեց և առաջ անցաւ առանց բռն մը արտասանելու: Քիչ վերջը կրկին ու երրորդ անգամ խաչաձեւեց մեր ճամբան, մեր շուրջը դեղերելու երեւոյթով մը: Թիւնէյի կէս ժամ մօտեցած էինք, երբ յանկարծ միեւնոյն անձը մեր առջեւ տնկուեցաւ: Նիտակ կառքիս վրայ եկաւ, ձիէն իջաւ և, կառքիս ձիերուն սանձերէն բռնելով՝ ուզեց կառքը առաջնորդել ճամբէն դուրս, բլուրին տակը, հեղեղատէ գոյացած խորունկ ձորամէջը: Գետին ցատկեցի: Նոյնը ըրաւ նաեւ ոստիկան-զինւորը: Կարծեցինք որ աւազակներէ յարձակում պիտի կրենք և ինքնապաշտպանութեան կը պատրաստուէինք, բայց վրայ հասաւ ոստիկանութեան պաշտօնեան և մեզի հրամայեց քաշել և միաժամանակ մեծ ակնածանքով անծանօթը բարեւեց: Այդ բոպէին մեր առջեւը ցցուեցան չորս հոգի, — մինչեւ ի-

րենց ակռաները զինուած:

Անծանօթը որ կը թուէր թէ այդ զինւած մարդոց պետն էր, նշան մը տուաւ: Այս մարդիկը բռնցին զիս և միւս կառապանը և մեր ձեռքերը կապելէ վերջ, կառքէն իջեցուցին ձիւց արտարակաւները, որոնց հրամայեցին իրենց ունեցած զրամները յանձնել, և սրովհետեւ ձեռքերնին կապուած էր, զամոնք խուզարկելու գործը ոստիկանները ստանձնեցին, որոնք կողոպտեցին ինչ որ ունէին, դրամ, թրքթապանակ, համբիչ, ծխամորձ եւայլն:

Այս գործողութիւնը աւարտելէ վերջ, ոստիկանը և ոստիկան-զինւորը միւս կառքը նստելով մեկնեցան: Իմ ձեռքերս ալ քակելով, արտօնեցին որ քաղաք վերադառնամ: Դալով աքսորականներուն չորս չէթէներուն և անոնց պետին կողմէ հրամայուեցաւ իրենց հետեւիլ:

Չանոնք հեռուէն կը դիտէի. հետաքրքրութիւնը զիս անհանգիստ կընէր: Այդ էֆէնտիները ո՞ւր կը տանէին արդեօք: Չորամէջը կտրելով անցան միւս եզրը, ուր փոքր անտառ մը բլուրը կը զարգարէ, քիչ մը աւելի առաջանալով, անոնց պետը արտասանեց քանի մը բառեր՝ որոնք չկրցի հասկնալ: Ատկէ ետք մարդիկը յարձակեցան էֆէնտիներուն վրայ, որոնց զգեստները հանեցին և բոլորովին մերկացուցին: Չեմ կրնար նկարագրել այն տեսարանը՝ որուն ներկայ եղայ... Այս խեղճ զոհերը մէկիկ-մէկիկ ծառերուն կապուեցան: Իրենց ձեռքերը կապուած ըլլալով՝ չէին կրնար ինքզինքնին պաշտպանել: Յետոյ չէթէապետը և իր մարդիկը իրենց դաշոյնները մերկացուցին և սկսան դանդաղօրէն և հանդարտ կերպով զոնոնք մորթոտել: Դատապարտեալներուն աղաղակը և անոնց յուսահատ կատաղութիւնը սիրտս կը ճմլէին»:

Ահա՛ պատմութիւնը Սեւակին և իր ընկերներուն որոնք կրնային փրկուել եթէ ընդունէին Չէթէճի Իսմայիլի առաջարկը ..

Հայրենիքին և Լուսաւորչի լոյս հաւատքին այս հաւատարիմ նահատակներուն յիշատակը օրհնեալ ըլլայ և օրինակը՝ մեզի առաջնորդ:

«Հայրենիք» ամսագրէն քաղուած.  
Թ. տարի թիւ 1.

# Հ. Մ. Ը. Մ. Ի ԾՕ - ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ 13 Ապրիլ և Կիրակի 14 Ապրիլ, ընդհանուր խանդավառութեան մէջ տօնուեցաւ Հ. Մ. Ը. Մ. Ի յիսնամեակը: Այս ուրախառիթ պատեհութեամբ Հ. Մ. Ը. Մ. Ի.—Նուպարի վարչութիւնը կազմակերպած էր ճոխ յայտագրով մարզահանդէս մը, հրաւիրելով Պէյրութի Հ. Ե. Ը. Ի «Անդրանիկ» ակումբի երկսեռ խումբերը ինչպէս նաեւ Աղեքսանդրիոյ Հ. Մ. Ը. Մ. Ի իգական և արական ինչպէս նաեւ Գահիրէի Հ. Մ. Ը. Մ. Ի.—Նուպարի երկսեռ կազմերը, որոնք փոխն ի փոխ սարքեցին հետաքրքրական մրցումներ: Այսպէս Շաբաթ և Կիրակի օրերու ընթացքին տեղի ունեցան չորս մրցումներ:

### ՇԱԲԱԹ ՕՐ

Առաջին մրցումը տեղի ունեցաւ Գահիրէի Հ. Մ. Ը. Մ. Ի.—Նուպարի և Լիբա-

նանի «Անդրանիկ» օրիորդաց խումբին միջեւ: Այս մրցումին սկիզբէն յայտնի եղաւ «Անդրանիկ» խումբին գերազանցութիւնը: Առաջին կիսախաղը վերջացաւ ի նպաստ «Անդրանիկ» Ի, 14-9 կէտերով: Երկրորդ կիսախաղն ալ սկսաւ միեւնոյն աշխուժութեամբ և վերջացաւ 33-26 կէտով ի նպաստ լիբանանահայ խումբին: Խումբը լաւ մարզուած է, մարզիչն է Հրաչ Մանուկեան:

Երկրորդ մրցումը տեղի ունեցաւ Հ. Ե. Ը. Ի «Անդրանիկ» Ի մանչերու և Աղեքսանդրիոյ Հ. Մ. Ը. Մ. Ի համապատասխան խումբերու միջեւ: Մրցումին սկզբնաւորութենէն պէյրութահայ խումբին գերազանցութիւնը յատակ էր, որ առաջին կիսախաղը աւարտեց 29-17 կէտով: Երկրորդ կիսախաղն ալ սկսաւ աշխոյժ թափով մը և վերջացաւ 62-43 արգիւնքով:



Յօբէյիմական Յիսնամեակ Հ. Մ. Ը. Մ. Ի — 1968

Յաղթանակի պսակը շահեցաւ «Անդրանիկ» խումբը, որ տիրացաւ «Հայկ ձիգմէճեան» բաժակին:

**ԿԻՐԱԿԻ ՕՐ**


Կիրակի օրուան զոյգ մրցումներէն առաջինը տեղի ունեցաւ Հ. Ե. Բ. ի «Անդրանիկ» և Աղեքսանդրիոյ Հ. Մ. Բ. Մ. ի օրիորդաց խումբերու միջեւ: Այս մրցումին առաջին կիսախաղը վերջացաւ 21-17 արդիւնքով ի նպաստ լիբանանահայ խումբին: Երկրորդ կիսախաղին Աղեքսանդրիոյ մեր խումբը առաւել եւս յայտնաբերեց իր տկարութիւնը: Կիսախաղը վերջացաւ պէյրուսահայ խումբին յաղթանակով՝ 51-33 արդիւնքով: Մարզագաշտը ուր աւելի քան 700 հանդիսատեսներ հաւաքուած էին ջերմապէս գնահատեցին մեր հիւր խումբը:

Երկրորդ մրցումը տեղի ունեցաւ Պահիրէի Հ. Մ. Է. Մ.—Նուպարի և Հ. Ե. Բ. ի «Անդրանիկ» ի մանջերու խումբերուն միջեւ: Պահիրէցիք ջանացին փրկել իրենց մարզական պատիւը լաւագոյն խաղարկութիւն մը ցուցաբերելով, սակայն

առաջին կիսախաղը աւարտեցին մէկ կէտի կոչուստով, այսինքն 34-33 ի նպաստ լիբանանեան խումբին: Երկրորդ կիսախաղն ալ սկսաւ նոյն թափով, Պահիրէցիք իրենց լաւագոյնը ըրին յաղթանակը ապահովելու համար, մրցումին արդիւնքը եղաւ սակայն 63-64 ի նպաստ լիբանանեան խումբին, որուն աղջկանց խումբը ստացաւ Օր. Սեզա Օգնայեանի տրամադրած արծաթեայ բաժակը, իսկ մանջերու խումբը՝ Տէր և Տիկին Յակոբ Էքսէրճեանի նուիրած արծաթեայ բաժակը: Մասնակցող վեց խումբերուն բաժնուեցան Տէր և Տիկին Յովհաննէս Քէհեանեանի նուիրած յիշատակի շքանշաններ:

**ՀԱՆԴԻՍԱԻՈՐ ԲԱՅՈՒՄ ՀԱՅԿ ՁԻԶՄԷ-  
ՃԵՍՆԻ ՇԻՐԻՄԻՆ**

Կիրակի, 14 Ապրիլ կ. ե. ժամը 2ին, Հելլոպոլիոյ Ամենայն Սրբոց գերեզմանատան մէջ հաւաքուած էին Հ. Բ. Բ. Միութեան անդամներու Լոյիկ բազմութիւն մը, կատարելու համար ողբացեալ Հայկ



Յիշատակ մը անցեալէն Հ.Մ.Բ.Մ. — Նոսպար



Ճիզմէճեան շիրիմին բացումը և անհեռացեալ մարզիկներու յիշատակին ալ հոգեհանգստեան պաշտօն մը: Ուսկանոց շիրիմին բողոսիքը հաւաքուածներէն խօսք առին Տէր Սահակ Ա. քհնյ. պր. Համբարձում Գարայեան, պր. Վրէժ Սէֆէրեան (Աղէքսանդրիա), պր. Լեւոն Տէր Յակոբեան (Նիրր Իսթ), պր. Ենովք Պալիկեան (Պէյուսթ) և պր. Մենիկ Տէր Պետրոսեան (Գահիրէ):

Հոգեհանգստեան պաշտօնը կատարեց

ընց Տէր Ներսէզ վրդ. Բապուճեան, որ օրհնեց նաեւ գերեզմանները Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեանի և մարզանքի բազմամեայ ուսուցիչ Արարատ Քրիսեանի: Ներկաները ցրուեցան հայ սերունդներու Ֆիզիկական բարօրութեանը համար աշխատած վեթերաններուն յիշատակը յարգած ըլլալու գոհունակութեամբ:

Շիրիմը գործն է պր. Վարուժան Էքսէրճեանի:



Յօրեկնական Յիսնամեակ Հ. Մ. Բ. Մ.ի — 1968

## ԿԵԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

### ՀԱՅՐԵՆԻ Ա. ԽԱՐԶ

Այս տարի աշնան կը նշուի աշխարհի հնագոյն քաղաքներէն Երեւանի 2750ամեակը:

Երեւան ունի 1100 պողոտայ, փողոց, և խճուղի, ուր կ'երթեւեկեն 543 օթօպիւս, 182 տրօլիպիւս, 242 հանրակառքի վակօն, 1032 մարգատար թաքսի:

Քաղաքի երթուղիներու երկաթութիւնն է 640 քլի. մեթր:

Մաշտոցի Մատենադարանին մէջ աչ-

ժրմ կան 14277 ձեռագիր, որոնց 10348 հայերէն, իսկ մնացեալը 20 տարբեր լեզուներով գրուած են:

Ամենամեծ ձեռագիրը Մշոյ Հատընտիրն է որ 1ը կշռէ 34 քիլօ, իսկ ամենափոքրը՝ Տօնացոյց մըն է որ կը կշռէ 17 կրամ:

1967ի ընթացքին Հայաստանի մէջ ծնան 58000 մանուկներ, բազմաթիւ են երկւորեակները: Միջին հաշուով շաբաթական 13 երկւորեակ լոյս աշխարհ կու գան հայոց երկրին մէջ:

Հոչակաւոր երգահան Արամ Խաչատրեան պարզեատրուեցաւ «Սովետ» Մի-



ութեան զինեալ ուժերու 50 ամեակ-ի շը-  
քանչանով:

**ՀԱՅԱԳԻՏԱԿՆԸ ԿԵԴՐՈՆԸ**

Երեւանի պետական համալսարանը  
ունեցաւ իր հայագիտական կեդրոնը: Հա-  
մալսարանի տնօրէնը, Ակադեմական Մը-  
կրտիչ Ներսէսեան յայտարարեց, թէ ան-  
հրաժեշտ դարձաւ կեդրոնին հիմնարկու-  
թիւնը, որպէսզի հնարաւոր դառնայ հա-  
մագործակցութիւնը՝ հայոց լեզուի, հայոց  
գրականութեան և հայոց պատմութեան  
ամբիոններուն:

Հայագիտական կեդրոնին նպատակն  
է նաեւ մասնագէտներ պատրաստել՝ թէ՛  
Հայաստանի և թէ՛ արտասահմանի հա-  
մար:

Կեդրոնին հասցէն է. — Մուսեան փո-  
ղոց թիւ 1 Երեւան:

Ապրիլ 17ին քաղաքամայր Երեւանի  
բնակչութիւնը իր յարգանքի վերջին տուր-  
քը տուաւ վաստակաւոր բժշկուհի Արմե-  
նուհի Յարութիւնեանի, որ իր մահկանա-  
ցուն կնքեց խոր սուզի մատնելով հան-  
րութիւնը:

Հանգուցեալ բժշկուհին աղջիկն էր  
հոչակաւոր պատմաբան և գրող Լէօի (Ա-  
ռաքել Բաբախանեան): և մայրը Սովո-  
Հայաստանի Հանրապետութեան նախագահ  
Նաղուշ Յարութիւնեանի:

**ԵՐԵՒԱՆ**

1967 Հոկտեմբեր 16ին, Սփիւռքահա-  
յութեան հետ Մշակութային կապի կոմի-  
տէն կազմակերպեց ընդունելութիւն ի պա-  
տիւ Հայկական Բարեգործական Ընդհա-  
նուր Միութեան նախագահի տեղակալ, Եւ-  
րոպայի Շրջանային Յանձնաժողովի նախա-  
գահ պր. Երուանդ Հիւսիսեանի:

Ընդունելութեան կը մասնակցէին  
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և  
Մարսէյլէն Տէր և Տիկ. Ջրբախտեաններ,  
Մոնաքոյէն պպ. Ճիբրճեան, Լիզպոնէն Վահ-  
րամ Մավեան, Պէյրութէն Աշոտ Պատ-  
մագրեան և ուրիշ հիւրեր:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԻ անդամակ-  
ցութեան համար ներկայացուած են Ծա-

տուր Աղայեան, Գէորգ Ղարիբջանեան,  
Կարօ Գաֆադարեան, Արաքսիա Բաբա-  
յեան, Յովհաննէս Չալթիկեան, Սամիկոն  
Գանձեան, Գուրգէն Թաղէոսեան և Աար-  
գիս Վարդանեան:

Իբրեւ թղթակից անդամներ ներկա-  
յացուած են 23 անուններ: Բոլոր թեկնա-  
ծուներն ալ վաստակաւոր են և հոչակա-  
ւոր՝ գիտական, բանասիրական և պատ-  
մական մարզերու մէջ:

**ՄԱՐԱԶԱՆՏ ՅՈՎՀ. ԲԱՂՐԱՄԵԱՆ**

Խորհրդային բանակի կազմակերպ-  
ման յիմնամեակին առթիւ՝ Հոկտեմբեր-  
եան յեղափոխութեան առաջին կարգի շը-  
քանչանի արժանացած են հետեւեալ հինգ  
մարաջախտները. — Յովհաննէս Բաղրամ-  
եան, Ժուքով, Թիմոչենքոյ, ՌոքոՎսքի և  
ՎասիլեՎսքի:

**ԱՐԳԻՇԴԵՍ Ա.Ի ՅՈՒՇԱՐԱԶԱՆԸ**

Արին բերդի մօտ Երեբունի (Երեւան)  
թանգարանին կառուցման աշխատանքնե-  
րը սկսան: Այստեղ պիտի հաւաքուին պե-  
զումներու ընթացքին յայտնաբերուած բո-  
ւոր իրերը:

Թանգարանը պիտի ունենայ Ուրար-  
տական ճարտարապետութեան յատուկ գի-  
ծերը, զարգաքանդակներով հանդերձ:

Մուտքի պուրակին մէջ պիտի զե-  
տեղուի Արգիշդէս Ա.ի յուշարձանը:

**ԴԻԼԻՋԱՆ**

1968ին նոր բնակարաններու շինու-  
թեան համար մեծ գումարներ պիտի յատ-  
կացուին այս առողջավայրին մէջ: Պիտի  
կառուցուի նաեւ երաժշտական դպրոց մը  
և երգահանդէսներու յատուկ սրահ մը:

**«ՎԱՐԴԱՆԱՆՔ» ԹԱՏԵՐԱՆՈՒԱԳԸ**

Գերենիկ Երկաթի (Դէմիրճեան) վէ-  
պին հիման վրայ յօրինուած է երաժշտա-  
կան այս գործը, որ կը ներկայացնէ Երդ  
դարու հայոց կեանքին ամենէն յուզիչ  
գրուազը: Գոյատեւման կամք, ազատա-  
տենջ ոգի, անխորտակելի սէր և անսահ-  
ման հաւատք. ահա՛ հայութիւնը ոտքի

պահող տարերքը, որոնցմով ուզած է հիւսել իր թատերանուագը՝ Վաղարշակ Կոտոյեան, որ հեղինակած է վեց օրերաներ և կը պատրաստէ նոր գործ մը Երեւանի հիմնադրութեան 2750 ամեակին առթիւ:

**ՀԱՆԿԱԿԱՆ ԴԵՂԵՐ**

Երեւանի մէջ հիմնուած է ղեղազոր-ծարան մը որ պիտի հայթայթէ աւելի քան 20 տեսակ ղեղեր: Ասոնք պիտի համադրուին Գիտութիւններու Հայկական Ակադեմիին ենթակայ օրկանական քիմիայի կաճառին կողմէ:

Իջեւանի (Հայաստան) Հերանց զիւղին մէջ հանգիստաւորագէտ նշեցին 172 տարեկան Խանում Շահինեանի յորեւեանական 50րդ ծոռան (թոռան զաւակը) ծնունդը: Համագիւղացիները Խանումը կ'անուանեն զիւղին տատը (մեծ մայր), որ ունի 19 թոռ և 10 ծոռ: Խաթուն տատը քաջաւոզ է, միայն կ'ափսոսայ որ ամուսինը չուտ մեռած է... 95 տարեկանին:

— Կարմիր բլուրի շրջակայքը, չուրջ 45 հեկտար տարածութեամբ պիտի կանաչադարձուի, փողոցները և պարտէզները ծաղիկներով պիտի զարդարուին: Նոր Զէյթուն թաղամասի կանաչ գօտին պիտի ընդարձակուի: 2000 ծառ պիտի տնկուի Նոր Արէշի մէջ: Պիտի կանաչագարգուի նաեւ Եռարուրը, Արին բերդը և Երէքունին: Պիտի տնկուին 3, 5 միլիոն ծաղիկներու տունկեր:

որոնց շառուիղները այսօր կը շարունակեն թերթը վարել:

ՌՈՒՄԱՆԻԱ, ՊՈՒՔՐԷՇ. Երեւանի կրկեսային արթիսթները ելոյթներ ունեցան Պուքրէշի պետական կրկէսին մէջ: Գործադրեցին ճոխ յայտագիր. — կշռախաղեր, լարապար, վայրենի և ընտանի կենդանիներու (արջեր, ձիեր) խաղեր:

Հայաստանի արթիսթները զարմանք պատճառեցին ուսմանացի հանգիստականներուն:

Պուքրէշի մէջ տեղի ունեցած «Ճօրճէ Էնէսքու» միջադէպին 4րդ երաժշտական մրցումին՝ դաշնակի առաջին մրցանակը շահած է Սամուէլ Արգարի Ալումեան՝ Հայաստանէն, 26 տարեկան որ ներկայիս դասախօս է Երեւանի երաժշտանոցին մէջ, իսկ երգչուհի Ալիս Վարդգէսի ժամագործեան՝ Յրդ մրցանակը: Ծնած է Տոնէցք և աւարտած՝ Օտեսայի երաժշտանոցը:

**ՅԲԱՆՍԱ ՓԱՐԻԶ**

Կիրակի, Մարտ 31ին, երեկոյեան ժամը 21, 45ին հայրենի բանաստեղծուհի Տիկ. Սիլվա Կապուտիկեան և ղերասանուհի Տիկ. Վարդուհի Վարդերեսեան այցելեցին Հ. Բ. Ը. Լիւթեան համալսարանական Ոստանի հայ ուսանողներու Տունը: Իրենց կ'ընկերանար Ֆրանսայի Խորհրդային ղեսպանատան առաջին քարտուղար պր. Մարութ Խարաղեան:

Հայ ուսանողներու Տան վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած այս հաւաքոյթին ներկայ գտնուեցան 60 հայ ուսանող-ուսանողուհիներ և հիւրեր:

Հանգիստմը տեղի ունեցաւ զրոյցի ձևով և ներկաներն ու հայրենի հիւրերը առիթը ունեցան մօտէն կարծիքներ փոխանակելու ղանաղան գրական և ազգային այժմէական հարցերու շուրջ:

Ապա Տիկ. Վարդերեսեան արտասանեց Պարոյր Սեւակէն և Սիւամանթօյէն: Տիկ. Կապուտիկեան եւս արտասանեց Արարատի մասին իր վերջին մէկ գործը: Ելոյթ ունեցան նոյնպէս ուսանողները երգով և արտասանութեամբ:

**ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԿԵԱՆՔ**

ԹՈՒՐԻՔԻԱ, ՊՈՒՄ. Պուսոյ մէջ, Հոկտեմբեր 25ին տօնուեցաւ թրքահայ առաջին տպագրութեան 400 ամեակը, եկեղեցական և աշխարհիկ հանդիսութիւններով: Տպագրութիւնը կատարուած է Արգար Գըպիրի կողմէ:

— Պուսոյ մէջ «Ժամանակ» օրաթերթը թեւակոխած է իր հրատարակութեան 10րդ տարին (Հոկտ 2): Մեր պաշտօնակիցին հիմնադիրները եղած են Միսաք (Քասիմ) և Սարգիս Գոչունեան եղբայրները:

— Փարիզի հայ արուեստագետները հիմնեցին Միուլթիւն մը որ կը կրէ միջնադարեան նշանաւոր մանրանկարիչ Թորոս Թօսլիւնի անունն ու մականունը, Միուլթեան կ'անդամակցին ՅՕ հոգի. — նկարիչներ, լուսանկարիչներ, ճարտարապետներ, քանդակագործներ և բեմադրիչներ: Յիշենք անոնցմէ Գարգու, Երուանդ Իւթիւճեան, Տարիա Կամսարական, Բիւզանդ Թօփալեան, Ռ. Ճերանեան, Ասատուր Պշտիկեան եւայլն:

Միուլթիւնը առաջադրած է հանդիսանալ մշակութային ակումբ մը, զօդ մը՝ հայրենիքի և սփիւռքի արուեստագետներու միջեւ, և երկու տարին անգամ մը գէթ ցուցահանդէսներ սարքել:

Առաջին ցուցահանդէսը տեղի պիտի ունենայ Մայիսին:

**ՄԱՐՍԷՅԼ.** Սերաստացի Մուրատի յիշատակը յարգողները՝ Մարտիլիոյ Ուսումնասիրաց միուլթիւնը Պոմօնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ հոգեհանգրստեան պաշտօն կատարել տուած է հերոս Մուրատի հոգևոյն ի հանգիստ: Հոգեճաշը հանդէսի մը հանգամանք առած է: Խօսողները պանծացուցած են անվեհեր մարտիկին յիշատակը: Արտասանութիւններ և երգեր մաս կազմած են հաւաքոյթին:

**ԵԹՈՎՊԻԱ**

Հայէ Սիլասէ կայսրը իր անունով մրցանակ մը հաստատած է, որ կը շնորհուի այն անձերուն, որոնք օգտակար կ'ըլլան Եթովպիոյ յառաջգիւմութեան գըրական, գիտական, գեղարուեստական և ճարտարարուեստական մարզերու մէջ:

Տարույս սկիզբը (1968) երեք անձեր արժանացան սօ՛ն մրցանակին. ոսկեայ պատուանշան մը և 40.000 եթովպական տոլար: Այդ երեք անձերէն մ'ին հայ է, Իսկէնտէր Պօզոսեան, երկրորդը Ֆրանսացի, երրորդը՝ բոլոնիացի:

— Ատիս Ապապայի մէջ, եգիպտական պետական օրերայի երգիչ Գրիգոր Փարթամեան սարքեց հայկական երգահանդէս և թատերական երեկոյթ:

Երգահանդէսը տեղի ունեցաւ Ֆրանսա-

կան Լիսէի սրահին մէջ, ուր Փարթամեան երգեց 14 երգեր: Նոյն սրահին մէջ բեմադրուեցաւ հանրածանօթ «Չարչըլը Արթին աղա» զաւեշտախաղը, որուն գլխաւոր դերը անձնաւորեց մեր սիրելի Փարթամը մեծ յաջողութեամբ: Զոյգ հանդէսներուն սատար հանդիսացաւ Ատիս Ապապայի «Արարատ» մարզական միուլթիւնը:

**ԼԻԲԱՆԱՆ. ՊԵՅՐՈՒԹ**

Պէյրուլթի Փանար արուարձանին մէջ 1967 Նոյեմբեր 11ին հիմնարկէքը կատարուած է ժողովրդային բնակարաններու ցանցի մը, բարերարութեամբ «Հաուըրտ Գարակէօզեան» Հիմնարկութեան նախագահ և Հ. Բ. Ը. Միուլթեան Կեդրոնական վարչութեան անդամ Օր. Լիւա Գարակէօզեանի և նախագահութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

**ԹԵՀՐԱՆ. ԻՐԱՆ**

Հ. Բ. Ը. Միուլթեան «Նուարդ Կիւլպէնկեան» վարժարանի բացումը. — Անցեալ տարի Նոյեմբեր 24ին, բացումը կատարուեցաւ Թէհրանի «Նուարդ Կիւլպէնկեան» նորակառոյց վարժարանին ի ներկայութեան շրջանի Կրթական վարիչի, Ծերակոյտի և խորհրդարանի հայ պատկամաւորներու: «Կիւլպէնկեան» հիմնարկութեան ներկայացուցիչ պր. Քէշիշեանի, Հ. Բ. Ը. Միուլթեան կեդրոնի ներկայացուցիչ պր. Մ. Իսկէնտէրեանի, Առաջնորդ Սրբազան Հօր և աւելի քան երկու հարիւր հրաւիրեալներու:

Հ. Բ. Ը. Միուլթեան անդույն մասնաճիւղի ատենապատ պր. Ասատուրեան պարսկերէն լեզուով հաւաքոյթը բանալով, նորաչէն դպրոցի գետնի գնումին և կառուցումի մասին տեղեկութիւններ տուաւ աւել ցընելով նաեւ սրահի մը կառուցումին որոշուած ըլլալը: Ապա շնորհակալութիւն յայտնեց շէնքի ճարտարապետին՝ պր. Աֆթա՛ղեանի, Իրանի Կրթական նախարարին, Կրթական քննիչին և անդրադառնալով երկրի վեհտպետներուն թագադրութեանց, արեւշատութիւն մազթեց թագաւորին, թագուհիին և Իրանի

ժողովուրդին: Գործադրուեցաւ զեզար-  
 ւեստահան ճոխ յայտապիր մը: Ապա Կըր-  
 թական տեսուչը խօսք առնելով շնորհա-  
 ւորեց Կիւլպէնկեանները և աշգին բոլոր  
 նուիրատուները: Վերջին խօսողը եղաւ Ա-  
 ռաջնորդ Սըբազանը, ապա Կըթական վա-  
 րիչը ժապաւէնը մկրտելով՝ կատարեց  
 դպրոցին բացումը, ներկաները հրավիրե-  
 լով որ այցելեն արգիական տիպար վար-  
 ժարանը:

**ՊԱՏԻՈՅ ԹԷՅԱՍԵՂԱՆ**

Բարեգործականի Թեհրանի մասնա-  
 ճիւղի վարչութիւնը բոլոր անդամ-անդա-  
 մուհիները հրաւիրած էր թէյասեղանի մը  
 (Նոյեմբեր 5ին) որ սարքած է ի պատիւ  
 «Գ. Կիւլպէնկեան» հիմնարկի ներկայա-  
 ցուցիչ պր. Կորիւն Քէշիշեանի և Հ. Բ.  
 Լ. Միւսթեան կեդր. վարչութեան ներկա-  
 յացուցիչ Տիար Մ. Իսկէնտէրեանի:

Հաւաքոյթի ընթացքին խօսք առին  
 յարգելի ներկայացուցիչները, Տիկ. Ա.  
 Շիշմանեանը, Առաջնորդ Արտակ Արք.  
 Մանուկեանը, և շնորհակալութիւն յայտ-  
 նեցին դպրոցատէր նուիրատուներուն՝ Տիկ.  
 Ռիթա Էսայեանի, Տիար Նուպար Կիւլ-  
 պէնկեանի, «Կիւլպէնկեան» հիմնարկի և Հ.  
 Բ. Լ. Միւսթեան: Այս առիթով Տիկ. Ա.  
 Շիշմանեան Հ. Բ. Լ. Միւսթեան Պատուոյ  
 Անդամի վկայագրով պարգեւատրուեցաւ,  
 որ շնորհակալութիւն յայտնելով իրեն եղած  
 այս պատիւին համար յայտարարեց.— կը  
 խօստանամ Բարեգործականի միջոցաւ ծա-  
 ոայել հայ ժողովուրդին:

Եւ բուն ծափերու մէջ պր. Իսկէն-  
 տէրեան պարգեւազիրը յանցնեց բարեսէր  
 Տիկնոջ:

**ԻՐԱԳ**

1967ի ընթացքին հիմնովին նորոգ-  
 ւած է Պաղտատի Ա. Աստուածածին եկե-  
 ղեցին: Կառուցուած են Պատրյայի, Մուսու-  
 լի և Քերքուքի մէջ ազգ. վարժարաններ,  
 ինչպէս նաեւ դարմանատուն մը Պաղտա-  
 տի ազգ. դպրոցին համար:

Ա. Աստուածածին եկեղեցին 350 տար-  
 ւան հնութիւն մը ունի և ուխտատեղի է

Պաղտատի բոլոր ժողովուրդին համար:  
 Եկեղեցին հիմնովին նորոգողը եղած է Ա-  
 ռամ Ղարիպեան բարեպաշտ ազգայինը:  
 Պաղտատի վարժարանը ունի 1400 ա-  
 շակերտ, ունինք նաեւ երկրորդ մը 200  
 աշակերտով:

Մուսուլէն աւելի հիւսիս Զախօ ա-  
 ւանին մէջ կան 130 քրտախօս հայ ընտա-  
 նիքներ, մօտ 500 շունչով, որոնց հա-  
 մար եկեղեցի մը պիտի կառուցուի Կիւլ-  
 պէնկեան հիմնարկութեան օժանդակու-  
 թեամբ:

Իրազի հայութիւնը կը հաշուէ 18000  
 անձ:

— Կիւլպէնկեան հիմնարկութեան  
 վարչական խորհուրդի անդամներէն Ռոպեր  
 Կիւլպէնկեանի գլխաւորութեամբ Պաղտատ  
 ժամանած է պատւիրակութիւն մը, քըն-  
 նելու սոյն ծրագիրները, որոնք հետզհետէ  
 կ'իրագործուին հիմնարկութեան աջակցու-  
 թեամբ: Յարգ Կիւլպէնկեան հիմնարկը  
 ութը կէս միլիոն սթեքլին յատկացուցած է  
 Իրազի 212,000 սթեքլին՝ գիտութիւններու  
 Ակադեմիայի մը ստեղծումին և 100,000  
 սթեքլին Պաղեստինի օգնութեան:

Նախագահը պիտի ընդունի հիմնար-  
 կութեան պատուիրակութիւնը:

**ԳԵՂԱՐՈՒԻԵՍՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ**

ԱՊՐԻԼ 3 1968, ԱՄՀ-ի Մշակոյթի  
 նախարար Տօքթ. Սարուաթ Օքաշա բա-  
 ցումը կատարեց 44րդ «Սալօն տիւ Քէր»ի,  
 որուն մասնակցեցան 81 եզրիպտացի ար-  
 ւեստագէտներ իրենց 155 գործերով: Գա-  
 տական կազմը կը բաղկանար 19 արուես-  
 տագէտներէ: Եզրիպտացի նկարիչ Նաշարի  
 հետ Սիմոն Սամսոնեան, տարուան լաւա-  
 գոյն նկարիչի տիտղոսին արժանացաւ:  
 Սամսոնեանի «Երկու բարեկամուհիները»  
 կտաւը ջերմապէս զնահատուեցաւ:

ԱՊՐԻԼ 20 1963 Շաբաթ, Գահիրէի Ա-  
 մերիկեան համալսարանի ստաջարկին վը-  
 րայ, հանրածանօթ քանդակագործուհի Տիկ.  
 Այծեմիիկ Պօյաճեան պատրաստեց հոգեբան  
 ողբ. Տօքթ. Ամին Պոքթօրի դիմաքան-



«ՏԵՂԵԿԱՏՈՒ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԷՆ

# ՊՐ. ԱԼ. ՍԱՐՈՒԽԱՆ

## ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

30 Մ Ա Յ Ի Ս

Երեւանէն կը հաղորդեն որ սփիւռքի հետ Մշակութային Կապի կօմիտէի հրաւերով Երեւան ժամանած է համբաւաւոր արւեստագէտ, հրապարակախօս և հրապարակագիր Տիար Ալ. Սարուխան, որ իր դործերը պիտի ցուցադրէ Հայաստանի մայրաքաղաքին մէջ:

Յաջողութիւն և բարի վերագարձ մեր սիրելի արտօնատիրոջ:

դակը, համալսարանին մէջ ղետեղուելիք յուշատախտակին համար և որուն բացումը կատարեց համալսարանի տնօրէն Տոքթ. Պարթլէթ անցեալ Շաբաթ, 20 Ապրիլ 1968 երեկոյեան ժամը 7ին, հանդիսաւոր արարողութեամբ և ընդունելութեամբ: Յուշատախտակը ղետեղուած է գրադարանի շէնքին, «Հիւ Հաուզ»ի մուտքի դրան աջակողմը:

ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Ապրիլ 25, 1968, Հինգշաբթի, Գալուստեան Ազգ. վարժարանի «Գարգու» ցուցասրահին մէջ տեղի ունեցաւ նկարիչ Տիկ. Նորա Իփէքեանի աշակերտներուն նկարչական ցուցահանդէսին բացումը:

Հայ և օտար դպրոցականներ իրենց մասնակցութիւնը բերած էին սոյն ցուցահանդէսին: Հայոց Վեհափառ Հայրապետին Գահրիբէ ժամանումը, «Արմենիա» ջերմանաւը, երգի—պարի համոյթը, ազգային հերոսին՝ Զօր. Անդրանիկի նկարը, զոյգ Արարատները որոնք զարդերը կը կազմէին հայ աշակերտներու ստեղծագործութեանց: Ցուցահանդէսը տեւեց մինչեւ 2 Մայիս 1968:

Մ Ա Յ Ի Ս 9

Յաղթանակի Յրն է բովանդակ Խ. Մլուսեան և Մայր Հայրենիքի մէջ:

Ֆաշիստական բռնակալութիւնը ջախջախուեցաւ և Ռայխստակի վրայ սկսաւ ծածանիլ յաղթանակի գրօշը:

Մէկ միլիոն զինուոր, 40000 հրանօթ 6500 թանք և 8400 օդանաւ խորտակեցին Հիթլերեան վանտալութիւնը: Հայկական 89րդ զօրաբաժինը, վանեցի Նուէր Սաֆարեանի հրամանատարութեամբ մասնակցեցաւ Պերլինի գրաւումին:

## Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ՈՍԿԵԱՆ

25 Փետրուար 1968

Վիեննայի մէջ վախճանեցաւ հայագիտութեան վաստակաշատ ներկայացուցիչներէն Հ. Համազասպ Ոսկեանը:

Ծնած էր 1895 թուականին, Խոտորջուրի Խանդակոր թաղը: 1907ին կը մեկնի Վիեննայի Միլիթարեաններու մօտ ուսանելու: Կ'աշակերտէ ականաւոր հայագէտներ Հայր Տաշեանի և Հայր Ակիմեանին: Վիեննայի համալսարանը աւարտելէ յետոյ, 1922ին ստացաւ Տոքթորայի աստիճան:

Հայր Համազասպ երկար տարիներ վարած է Պրովզիվ քաղաքի (Պուլկարիա) և Պէյրութի Միլիթարեան վարժարաններու տնօրէնութիւնը: Հրատարակած է «Ողակաթ» հինգ հատուկոց ընթերցանութեան գիրքերը ինչպէս և հայոց պատմութեան և այլ դպրոցական դասագիրքեր: Երկար տարիներ ան վարած է նաեւ «Հանդէս Ամսօրեայ» հայագիտական հանդէսի խմբագրապետութիւնը: Հայր Համազասպը յատկապէս յայտնի է իբրեւ մեր ժամանակի խոշորագոյն ձեռագրագէտներէն մին:

Հայագիտութիւնը յանձինս Դոկտ. Հ. Համազասպ Ոսկեանի, կը կորսնցնէ իր հաւատարիմ, բազմավաստակ և անխոնջ մէկ մշակը: Յարգանք իր պայծառ յիշատակին:



## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ — ԳԱՆԻՐԷ

Գանիրէի Հ. Բ. Ը. Միութիւնը հանոյքն ունի տեղեկացնելու պատուարժան հանրութեան թե, իր հիմնած

### Ե Ա Գ Ո Ւ Պ Ա Ր Թ Ի Ն

գրադարանը որ կը գործէ 1958էն ի վեր, իր տրամադրութեան տակ ունի գրական, պատմական, գեղարուեստական, կրօնական եւ բանասիրական. ինչպէս նաեւ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ գիրքերու նոյս մքերք մը, որմէ կընան օգտուիլ մեր ընթերցասէր անդամները եւ Գանիրէի հայութիւնը անխտիր, առանց որեւէ վնարումի:

Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Ի Ն



### Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ Ն Վ ն ա ռ Վ ի չ Է

Շնորհակալութեամբ կ'ընդունինք նուէրներ, մեր այս ձեռնարկը աւելի նոյս եւ շահեկան ընծայելու համար:

— Ստանալու համար դիմել խմբագրութեան,  
15, Էմաս Էլ Տիմ փողոց Ա. յարկ — Գանիրէ

